

6297

264

4-22

1 OCT 20

0


ՀԱՄԱՐՈՂՈՒԹԻՒՆ
ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ


ԳՐԵՑ
ՍԱՄՈՒԷԼ Յ. ՓԱՇԿԵԱՆ


ՏՊԱՐԱՆ ՄԱՐԱՆԱԹԱ

ՀԱԼԷՊ

264
4-22








5.5TON

ՊԱՂԵՍՏԻՆ

Մղնապատ
0 5 10 20

Մեր ձամբորդութիւնը +++++





64
7-22

ՀԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ
ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ

Գ Ր Ե Յ

ՍԱՄՈՒԷԼ Յ. ՓԱՇԿԵԱՆ

ՏՊԱՐԱՆ ՄԱՐԱՆԱԹԱ

ՀԱԼԷՊ

1933

27.08.2013

6297

ՀԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԵՐԿՐԻՆ ՍԷՋ

Արդարև Աստուածաշունչը թանկագին զիրք մ'է, հարուստ հանք մը՝ որ կրնայ արածողել ամէն տեսակ ոսկի, արծաթ և թանկագին քարեր, երբ կը խուզարկուի Սուրբ Հոգւոյն օգնականութեամբ, աղօթքով և խորհրդածութեամբ:

Մեր երկնաւոր Հօր մեծ ողորմութեամբը 1932 և 1933 տարիներուն Աբրահամ եղբայր Սէֆէրեանի հետ առանձնաշնորհում մը ունեցանք պտույտ մը կատարել գէպի Պաղեստին, և տեսնել այն քաղաքներն ու գիւղերը որոնց մասին Աստուածաշունչը խօսած է, ուր մեր սիրելի Տէրը ու Փրկիչ Յիսուսը պտտած ու սորվեցուցած է և ուրիշ շատ Աստուծոյ զաւակներ ծնած, ապրած, գործած և ննջած են:

Մեր հետը կրելով մեր Սուրբ Գիրքերը, ինքնաշարժի և կամ շոգեկառքի մէջ, ծովի և կամ դետի վրայ, լեռներու և կամ հովիտներու մէջ, բացինք կենաց խօսքերը և ուրախութեամբ սերտեցինք զանոնք, որոնք մեր սրտին մեծ ցնծութիւն և ուրախութիւն եղան:

Այս ճամբորդութիւնը անցուցինք, աղօթքով, փառաբանական երգերով, վկայութիւններով, զանազան լեզուներով տպուած թերթիկներ և աւետարանի կրտսերներ ցրուելով, և ժողովներ ընելով:

Ապաշխարելէս վերջ չեմ յիշեր ատեն մը որ այսօր քան շատ երգ երգած և Տէրը օրհնած ըլլամ:

Կարելի չէ լիովին նկարագրել մեր սրտին զգացումները, փափաքները և սէրը ունեցանք (որոնք տա-



37419-67

51179-Ա.Է.

կաւին թարմ կը մնան) երբ Տէրոջ քաղաքը, երուսաղէմ հասանք և այցելեցինք այն խորհրդաւոր վայրերը, մանաւանդ Գեթսեմանին և Գողգոթան, ուր մեր յաւիտենական և անմահ Տէրը ու Փրկիչը մեռաւ, և իր անգին Սուրբ արիւնը թափեց փրկելու, մեղաւոր մարդկութիւնը մեղքի գերութենէն և յաւիտենական կորուստէն:

Ո՛հ, փառք և պատիւ ըլլայ այդ մորթուած Գառնուկին դարեր անվախճան, որ այս մեծ փրկագործութիւնը ըրաւ քեզի և ինծի համար:

Իբր կեդրոն երուսաղէմը ընտրելով, մեր ճամբորդութիւնները ըրինք գէպի արեւելք և արեւմուտք, հարաւ և հիւսիս:

Հետեւեալ բոլոր երկիրները քաղաքները, գիւղաքաղաքները, գիւղերը, տունները, պարտէզները, ծովերը, ժովակները, գետերը հեղեղատները, աղբիւրները, աւազանները, լեռները, բլուրները, հովիտները, ձորերը, անապատները և բոլոր յիշատակելի և աւանդական վայրերը, զոր վայրը յիշած եմ համարներով միասին, մենք մեր աչքերով տեսանք, ոմանք հեռուէն և ոմանք մօտէն զիտեցինք, և ոմանց մէջ ալ ժամանակ մը կեցանք:

Անկասկած այս մեր տեսածներէն շատերը իբր աւանդութիւն կը մնան, և չենք կրնար ընդունիլ թէ ճիշդ նոյնն են զոր Սուրբ Գիրքը կը յիշէ, քանզի դարերու ընթացքին ասոնցմէ շատեր լիովին քանդուած, տեղափոխուած և վերստին նորոգուած են, ինչպէս որ հիմակուան երուսաղէմը քանի մը անգամ հիմնադրուած և կործանուած է:

Քարտէսը Անգլիարէնէ թարգմանած, ընդօրինակած և գծած եմ, որ կրնայ գաղափար մը տալ Պաղես-

տինի և Եդիպտոսի մասին, և օրհնութիւն մը ըլլալ, եթէ աղօթքով սերտուի:

Դարձեալ քաղաքներու և գիւղերու դասաւորման համար օգտուած եմ սիրելի ուսուցչիս Բրոֆ. Եունկի գիրքէն, և ուրիշ գրքոյկներէ:

Այս ճամբորդութեան մէջ մինչ մենք ինքնաշարժով և շոգեկառքով կը պըտըտէինք, շատ ամչցանք երկնաւոր Հօրմէն, և իրարմէ, երբ յիշեցինք թէ մեր պաշտելի Տէրը և մարմնացեալ Արարիչը տաքին և ցուրտին, անօթի ու ծարաւ և յոգնած մարմնով, ոտքով կը պըտըտէր, կը քարոզէր, կը բժշկէր, կը սորվեցնէր, միշտ բարիք գործելով: Իրմէն խիստ շատ ամչցանք, որ շատ հարուստ էր, բայց մեզի համար շատ աղքատ եղաւ, որպէսզի Անոր աղքատանալովը, մենք աղքատներս հարստանանք: Բ կորն. 8. 9:

Յիրաւի միայն իրեն կը վայելէ, Փառք, պատիւ և զօրութիւն հիմա և բոլոր յաւիտենականութեան մէջ:

Պաղեստինի և Եդիպտոսի երկիրներուն մէջ հանդիպեցանք շատ սիրելի Աստուծոյ զաւակներուն, որոնցմէ շատ օրհնուեցանք, և օրհնեալ պատհանութիւններ ունեցանք Տէրոջմով հաղորդակցելու, և գլխաւորապէս փառաբանելու:

Սորվեցանք շատ դասեր, ընդունեցինք թէ մեր ապրած կեանքն ալ ինքնին ճամբորդութիւն մըն է, և թէ մենք ամէնքս ալ վերստին ծնանելէն վերջ, Տէրոջմով գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք, երկրէ երկիր կը ճամբորդենք, անցնելով խորտ ու բորտ ճամբաներէ, վտանգաւոր լեռներէ, ալեկոծեալ ծովերէ, մինչև հասնինք մեր վերջին կայանը, վերին բարձր և նոր երուսաղէմը ուր պիտի ըլլայ մեր յաւիտենական բնակավայրը, ուր

պիտի հանգչինք մեր քաջած թեթեւ նեղութիւններէն ,
որոնք բան մը չեն գալու փառքին քով որ մեզի պիտի
յայտնուի : Հռովմ . 8 . 18 : Բ Կորն . 4 . 17—18 :

Սիրելի ճամբորդակիցս , յարատեւենք Տորոջմով քա-
լելու , զի մեծ փառք է Իրեն հետ քալել : Եւ թէ Ան
որ գալու է պիտի գայ ու պիտի չուշանայ :

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

ՊԷՅՐՈՒՏԷՆ — ԵՐՈՒՍԱՂԷՍ

Մեր ճամբուն վրայ տեսանք հետեւեալ տեղերը :

1. Սիգոն , Եղեկ . 28 . 20—24 , ուր մեր Տէրը անոր փո-
ղոցներուն մէջ արլւն և ժանտախտ պիտի ղրկեր :
2. Սարեփթա , Գ Թագ . 17 . 1—16 , ուր Եղիա Տէրոջ
խօսքով օրհնեց կարասին արլւրը և կուժին իւղը :
3. Տիւրոս , Մարկ . 7 , 24 , ուր մեր Տէրը Ասորի կն-
կան զիւահար աղջիկը բժշկեց :
4. Պտողէմայիս , Գործք . 21 . 7 . ուր Պօղոս օր մը
եղբայրներուն քով կեցաւ :
5. Կիսոն հեղեղատ , Գ Թագ . 18 . 40 , ուր Եղիա Բա-
հաղի 450 մարգարէները մեռցուց :
6. Ասեր , Դատ . 5 . 17 , ծովեզրեայ քաղաք մը , ուր
նաւեր կը հանգստանային :
7. Կարմեղոս լեռ , Գ Թագ . 18 . 18—39 , ուր Եղիա եր-
կինքէն կրակ իջեցուց , որով այրեց ողջակէզը ,
փայտերը և հողը :
8. Յեզրայէլի հովիտ , Յես . 17 . 16 , ուր Քանանացի-
ները երկաթէ կառքեր կը գործածէին :
9. Մակեդոնի հովիտ , Գ Թագ . 9 . 27 , ուր Յովսիա
բարի թագաւորը վերաւորուեցաւ և մեռաւ : Կը
կարծուի թէ հոս տեղի պիտի ունենայ Արմազեդո-
նի մեծ պատերազմը : Յայտ . 16 . 16 :
10. Մակեդա , Յես . 10 . 10 , ուր՝ Տէրը պատերազմե-
ցաւ Իսրայէլի տեղ :
11. Նազարէթ , Մատթ . 2 . 23 , ուր մեր Տէրը մեծցաւ :

12. Թաքօր լեռ, Դատ. 4. 6, ուր Բարակ 10,000 մարդով Սիսարայի դէմ ելած էր:
13. Նային, Դուկ. 7. 11, ուր մեր Տէրը որբեւարիին մեռած պատանին կենդանացուց:
14. Ենգադգի, Ա. Թագ. 24. 1, ուր Դաւիթ Սաւուղի երեսէն փախած կը նստէր:
15. Սունամ, Դ. Թագ. 4. 8, ուր երեւելի կին մը կար, որ Եղիսէն միշտ հացի կը հրաւիրէր:
16. Գեղբուէ լեռ, Ա. Թագ. 31. 1, ուր Սաւուղ անձնասպան եղաւ, և Իսրայելացիները սպաննուեցան:
17. Յեզրայէլի մուտք, Դ. Թագ. 18. 46, ուր Եղիա Կարմեղոս լեռնէն Աքաաբի կառքին առջեւէն վազելով մինչև հոս եկաւ:
18. Դօթայիմ, Ծննդ. 37. 17-23, ուր Յովսէփ գուբի մը մէջ ձգուեցաւ:
19. Եփրեմ լեռ, Ա. Թագ. 9. 4, ուր Սաւուղ իր էշերը փնտռելու գնաց:
20. Սամարիա, Դ. Թագ. 6. 20, ուր Եղիսէ կոյր զինուորներուն համար աղօթք ըրաւ:
21. Սուքար, Յովհ. 4. 5-15, ուր մեր Տէրը Յակոբի աղբիւրին քով ծարաւին յաւիտենական կեանքի, (Աբ. Հոգւոյն) ջուրի աղբիւրները խոստացաւ:
22. Սիւքէմ, Ծննդ. 12. 6-7, ուր Աբրահամ Տէրոյնը սեղան շինեց:
23. Գեբաղ լեռ, Բ. Օրին. 27. 13, ուրկէ անէծք կը կարդացուէր:
24. Գարիգին լեռ, Բ. Օրին. 27. 12, ուրկէ օրհնութիւն կը կարդացուէր:
25. Իսկարիովտ, Մատթ. 10. 4, ուր Յուդա ծնած էր, որ նաև մատնեց մեր Տէրը:

26. Սելով, Ա. Թագ. 1. 21, ուր Եղիանա իր բոլոր ընտանեօք Տէրոյն զոհ մատուցանելու կ'երթար:
27. Եփրայիմ, Յովհ. 11. 54, ուր Յիսուս իր աշակերտներուն հետ կը կենար:
28. Բեթէլ, Դ. Թագ. 2. 23, ուրկէ երկու մատակ արջ ելլելով 42 ծաղր ընող տղաքներ պատառեցին:
29. Ռամա, Ա. Թագ. 25. 1, ուր Սամուէլ իր տանը մէջ թաղուեցաւ:
30. Մասփա, Ա. Թագ. 10. 17, ուր Սաւուղ թագաւոր օծուեցաւ:
31. Գաբաա, Ա. Թագ. 10. 26, ուր Սաւուղ կը բնակէր:
32. Անաթովթ, Երեմ. 1. 1, ուր Երեմիա կը բնակէր:
33. Նոբ, Ա. Թագ. 22. 11-19, ուր Սաւուղ 85 քահանաներ մեռցնել տուաւ:
34. ԵՐՈՒՍՍԱՆԻՄ, Դուկ. 19. 41-44, ուր մեր Տէրը զայն տեսնելով լացաւ անոր չարութեանը համար:
35. Երուսաղէմի փողոցներ, Երեմ. 5. 1, ուր ճշմարտութիւն փնտռող մարդ պիտի փնտռէին, եթէ գտնուելու ըլլար:

ԵՐԿՐՈՐԴ ԶԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԷՆ — ԵՐԻՔՈՎ

1. Գողգոթա լեռ, (Գանկի տեղ) Մարկ. 15. 22-38, ուր մեր Տէրը մեզ փրկելու համար խաչը ելաւ, և իր սուրբ արիւնը թափեց:
2. Կեդրոն հեղեղատ, Բ թագ. 15. 22-23, ուրկէ Դաւիթ և իր հետ գտնուողները լալով անցան:
3. Ենովմի որդւոյն ձոր, Երեմ. 32. 35, ուր Իսրայէլացիք իրենց որդիները Մողոքի համար կրակէ կ'անցնէին:
4. Զթեմնեաց լեռ, Ղուկ. 21. 37, ուր մեր Տէրը գիշերները կը կենար:
5. Բեթանիա, Յովհ. 12. 1, ուր Յիսուս մեռեալ Ղազարոսը յարուց:
6. Փորձութեան անապատ, Մատթ. 4. 1, ուր մեր Տէրը սատանայէն փորձուեցաւ:
7. Սամարացիին պանդոկը, Ղուկ. 10. 30-37, ուր կիսամեռ մարդը բարի Սամարացիին օգնութեամբը բուժուեցաւ:
8. Սողոմ, և
9. Գոմոր, Ծննդ. 19. 24, ուր Տէրը երկինքէն ծծումբ ու կրակ տեղաց: Այս երկու քաղաքներուն տեղերը որոշ չեն, սակայն կը կարծուի թէ Ազի ծովուն հիւսիսային և հարաւային կողմերը կ'ընկնան:
10. Ազի ծով, Ծննդ. 14. 1-8, ուր չորս թագաւորներ 5 թագաւորներու դէմ պատերազմի շարուեցան:

11. Յորդանան գետ, Մատթ. 3. 13-17, ուր մեր Տէրը մկրտուեցաւ, Սուրբ Հոգին աղանիլի նմանութեամբ երեցաւ, և Աստուծոյ ձայն մը եկաւ ըսելով թէ ատիկա է իմ սիրելի Որդիս, որս հաւներ եմ:
12. Աքովրի ձոր, Յես. 7. 24-26, ուր Աքարի վրայ քարակոյտ մը զիւղեցին:
13. Երիքով, Յես. 6. 1-20, որուն շուրջ Իսրայէլացիք 13 անգամ պտըտելով փողեր հնչեցուցին, և Տէրը անոր պարիսպները փլցուց:
14. Խիստ բարձր լեռ, Մատթ. 4. 3, ուր Յիսուս Սատանային ըսաւ, «Ետիս գնա Սատանայ:
15. Երիքովի ջուրեր, Դ թագ. 2. 21-22, ուր Եզրիսէ աղ գնելով գէշ ջուրերը անուշուց:
16. Ժանտաթղենին, Ղուկ. 19. 4, ուր Զաքէոս ելած էր Յիսուսը տեսնելու:
17. Բերիթ հեղեղատ, Գ թագ. 17. 5, ուր ագռաւներ առաւօտ և իրիկուն Եզրիսի հաց ու միս կը բերէին:
18. Գաղգաղա, Դ թագ. 4. 38-41, ուր Եզրիսէ թունաւոր ապուրին կաթսային մէջ ալիւր նետեց և զոյն բժշկեց:
19. Գաղաթ, Գողգոթա, Ղուկ. 23. 33-44, ուր աւազակը փրկուեցաւ, և զրախտ գնաց:
20. Կուսակալին պալատը, Մատթ. 27. 27-31, ուր Յիսուս մեղի համար ծաղրուեցաւ:
21. Կայլափայլ տուն, Յովհ. 18. 24-27, ուր Պետրոս Տէրը ուրացաւ, և շուտ մը հաւը խօսեցաւ:
22. Վերնատուն, Գործք. 1. 13-14, ուր աշակերտներն, և կիներ միշտ աղօթք ու աղաչանք կ'ընէին:
23. Դաւիթի դերեզման, Գործք. 2. 29, ուր Դաւիթի գերեզմանը կը կենայ մինչև այսօր:

24. Ակեղղամա, (արեան աղարակ), Գործք. 1. 16-20, ուր Յուդա գլխավար իյնալով մէջտեղէն ճեղքուեցաւ:
25. Սելովամի աւագան, Յովհ. 9. 7-11, ուր ի ծնէ կոյր մարդը լուսացուելով տեսնել սկսաւ:
26. Ռուսական բարձր աշտարակ, (210 ոտք բարձր, շինուած Զիթենեաց լեռան վրայ), ուր Աբրահամ եղբայր Սէֆէրեան աղօթեց և երկու ժամ Քրիստոսի երկրորդ գալստեան վրայ խօսեցաւ մեզի հետ:
27. Թագաւորի հովիտ, Բ Թագ. 18. 18, ուր Արիստղոմ իր անուանը յիշատակ արձան մը կանգնեց էր, որ կը կենայ մինչև այսօր:
28. Գեթսեմանի, Մատթ. 26. 36-44, ուր մեր Տէրը աղօթեց և քաջալերեց իր աշակերտները, ըսելով՝ Արթուն կեցէք, և աղօթք ըրէք որ փորձութեան մէջ չմտնէք:
29. Եգեկիալի աւագան, Դ Թագ. 20. 21, զոր Եգեկիա շինել տուած էր:
30. Տէր Յիսուսի Նոր գերեզմանը, Մատթ. 27. 60, ուր մեր յարուցեալ Տէրը գրուեցաւ:
31. Գեհոն, Դ Թագ. 1. 38, 39, ուր Սողոմոն օծուեցաւ:
32. Թագաւորաց գերեզմաններ, Բ Մնաց. 21. 20, հոս Յովրամ չթաղուեցաւ իր չարութեանը համար:
33. Երեմիալի Ողբերգութեան քարայրը, ուր կը կարծուի թէ Երեմիա իր մարգարէութիւններուն մէկ մասը գրեց:
34. Սողոմոնի քարայրը, Դ Թագ. 5. 17, 18, ուր մեծ և պատուական քարեր կրեցին Տէրոջը տանը հիմին համար:
35. Երուսաղէմի շրջակայ պարիսպները, Երեմ. 52. 14, զոր Քաղզէացուց զօրքերը փլցուցին:

36. Անանայէլի աշտարակէն մինչև Անկեան դուռը, Երեմ. 31. 38-40, որ Տէրոջը համար պիտի շինուի ու ալ պիտի չքակուի, ու չփլչի յաւիտեան:
37. Լացի պատ, ուր կը մնայ Սողոմոնի շինած մէկ հին պարիսպը, որուն քով տակաւին Հրեաներ կ'ողբան իրենց անցեալին համար:
38. Մօրիալի լեռ, Բ Մնաց. 3. 1, որուն վրայ Սողոմոն Տէրոջը տունը շինեց, ուր հիմա Օմարի մզկիթը կը կենայ:
39. 40 հազար ախոռներ, Դ Թագ. 4. 26, ուր Սողոմոն իր կառքի ձիերը կը պահէր:
40. Բեթանիա, Յովհ. 11. 1-11, ուր մեր Տէրը մեռած Դաւարոսը յարուցանելու համար աշակերտներով գնաց, ուր մենք ալ ոտքով գացինք:
41. Դաւարոսի տուն և գերեզման, Յովհ. 11. 20-38, ուր Յիսուս իր բարեկամը, Դաւարոսը կենդանացուց:
42. Բորոտ Սիմոնի տուն, Մատթ. 26. 6, ուր կին մը ծանրադին իւզի շիշ մը կոտրեց, և անոր գլխուն վրայ թափեց:
43. Գեթսեմանի, Մարկ. 14. 32-41, ուր մեր Տէրը մեղաւորներուն ձեռքը մատնուեցաւ:

ԵՐՐՈՐԴ ՀԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

ԵՐՈՒՍԱՂԵՍԷՆ — ՅՈՊՊԷ

1. Գողգոթա, Յովհ. 19. 17-30, ուր մեր Տէրը ըստւ, «Ամէն բան կատարուեցաւ»:
2. Կարիաթարիմ, Ա. Թագ. 7. 1, ուր Տէրը տապա- նակը կը մնար:
3. Էմմաուս, Ղուկ. 24. 13-35, ուր երկու աշակերտ- ներ Յիսուսի հետ խօսելով կ'երթային, բայց Զինք չէին ճանչնար:
4. Լիւզգեա, Գործք. 9. 32, ուր Պետրոս Ենեա ա- նունով անդամաւոյժ մը բժշկեց:
5. Սարոն, Գործք. 9. 35, ուր շատեր Տէրը դար- ձան Ենեայի բժշկուելը տեսնելով:
6. Փղշապուտ երկիրը, Դատ. 15. 4-8, ուր Սամի- տոն 300 աղուէսներով այրեց անոնց հունձքերը, այգիները և ձիթենիները:
7. Յոպպէ, Գործք. 10. 32, ուր Սիմոն Պետրոս, Սի- մոն անուն կաշի բանողի մը տունը հիւր կը կենար:
8. Ակկարոն, Ա. Թագ. 5. 10-12, ուր մարգրիկ Թանչքի ուռեցքներով զարնուեցան տապանակին համար:
9. Էլայի հովիտ, Ա. Թագ. 17. 2-54, ուր Գողիաթ ըս- պաննուեցաւ:
10. Յուզայի լեռներ, Ղուկ. 1. 39, ուրկէ Մարիամ Զաքարիայի տունը գնաց:
11. Բեթսամիւս, Ա. Թագ. 6. 19-20, ուր 50,070 մարդ Տէրը մէն զարնուեցան, Տապանակին մէջ դիտել- նուն համար:

12. Աղովտոս, Գործք. 8. 40, ուր Փիլիպպոս Տէրը Հոգիէն յափշտակուելով հոս գտնուեցաւ:
13. Աբենեզեր, Ա. Թագ. 7. 12, ուր Սամուէլ վկայեց թէ, «Տէրը մինչև այստեղ մեզի օգնեց»:
14. Ետամի ապառաժ, Դատ. 15. 11-13, ուր 3000 մարդ երթալով Սամիսոնը կապեցին և դուրս հանեցին:
15. Երուսաղէմ, Մատթ. 21. 10, ուր երբ մեր Տէրը մտաւ, քաղաքը չարժեցաւ:

ԶՈՐՐՈՐԴ ԶԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԷՆ — ԲԵՐՍԱԲԷ

1. Վիչապի աղբիւր, Նէեմ. 2. 13, որուն առջեւն Նէեմիայ երուսաղէմի փլած պարիսպները և կրակէն այրուած դռները զննեց:
2. Կորստեան լեռ, ուր մեր Տէրը բռնելու և կորսնցնելու համար չար մարդիկ գէշ խորհրդակցութիւններ րրին:
3. Ռափայիններու հովիտ, Բ Թագ. 5. 17-25, ուր Դաւիթ Փղշտացիները զարկաւ:
4. Մոգերու հոր, Մատթ. 2. 9, 10, կը կարծուի թէ ասողը հոս եկաւ և կեցաւ:
5. Ռաքէլի գերեզման, Ծննդ. 35. 16-20, ուր Ռաքէլ թաղուեցաւ, Բեթլէհէմի շատ մօտ:
6. Բեթլէհէմ, Ղուկ. 2. 4-7, ուր մեր Փրկիչը ծնաւ:
7. Ոգողմի քարայր, Ա. Թագ. 22. 1, ուր Դաւիթի հօրը բոլոր տունը իր քով իջան, երբ ան Սաուուէ կը փախչէր:
8. Թէկուէ, Ամովս. 1. 1, ուր հովիւ Ամովս կը բռնակէր:
9. Սողոմոնի աւազաններ և պարտէզներ, Ժող. 2. 6, զոր ինք շինել տուած է:
10. Փիլիպպոսի անապատը, Գործք. 8. 26-40, ուր Փիլիպպոս Եթէովպացի ներքինին գտաւ, և Յիսուսը քարոզեց Անոր:
11. Մամբրէի կաղնին, Ծննդ. 18. 1, ուր Աբրահամ երեք հրեշտակներ հիւրասիրեց:

12. Եսքողի ձոր, Թուոց 13. 23-25, ուրկէ լրտեսներ խաղողի ողկոյզ մը կտրեցին, և Մովսէսի տարին:
13. Քերթն, Ծննդ. 13. 18, ուր Աբրահամ Տէրօջը սեղան շինեց:
14. Մաքիելայի այր, Ծննդ. 25. 9, 10, ուր Աբրահամ և իր կինը թաղուեցան:
15. Յուզայի Կարմեղոս, Ա. Թագ. 25. 2. 42, ուր չար Նաբաղի սիրտը քարի պէս եղաւ, և մեռաւ:
16. Վերի և վարի աղբիւրներ, Դատ. 1. 9-15, զորոնք Քաղէր իր աղջկան տուաւ:
17. Բերսաբէէ, Բ Թագ. 24. 2, ուր Յովաբ Դանէ մինչև հոս ժողովուրդը համրեց, և Աստուած Իսրայէլի ժողովուրդը պատժեց:
18. Բերսաբէէի անապատ, Ծննդ. 21. 14-21, ուր Աստուծոյ հրեշտակը Հագարի երեցաւ:



ՀԻՆԳԵՐՈՐԴ ԶԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

ՅՈՊՊԷՆ - ԵՐՈՒՍԱՂԷՄ - ՅԵԿԹՈՎԵԼ ԵՒ ՊԷՅՐՈՒԹ

1. Բաւերիմ, Բ Թագ. 16. 5, ուր Սէմէի Գաւիթ թաւաւորը անիծեց:
2. Բեթփագէ, Մատթ. 21. 1, ուրկէ Յիսուս իր երկու աշակերտները զրկեց:
3. Բեթանիա, Յովհ. 11. 1, ուր էր հիւանդ Դաւաւրսը:
4. Փորձութեան անապատ, Մարկ. 1. 12—13, ուր Յիսուս գազաններու հետ էր:
5. Սատիմ, Թուոց. 25. 1, ուր Իսրայէլացիք Բելփեւ գովրի յարեցան, և 24,000 հոգի մեռան:
6. Ալէնպիի կամուրջ, (Յորդանան գետի վրայ) Գ Թագ. 2. 13—14, ուր Եղիա իր վերաբերուն ջուրերուն զարկաւ, բաժնեց և Եղիսէի հետ միասին անցան:
7. Նաբու Լեւ, Բ Թրին. 34. 1—4, ուր Մովսէս վերջին անգամ Քանանու երկիրը զիտեց, և մեռաւ:
8. Ռամովթ Գաղաաթ, Գ Թագ. 22. 6—38, ուր Աքաաբ խաբուելով սուտ մարգարէներէն՝ սպաննուեցաւ, որոնք խաբուած էին սուտ օգիւէ մը:
9. Ռաբբա, Բ Թագ. 12. 26—31, ուր Գաւիթ պատեւրազմ ըրաւ և այդ քաղաքին թաղաւորին գլխէն թագը առաւ, որ վերջէն իր գլուխը գրուեցաւ:
10. Սին անապատ, Թուոց. 33. 36, ուրկէ Իսրայէլացիք դէպի Քանան ճամբորդեցին:
11. Սէիր լեւ, Բ Թրին. 33. 2, ուր Աստուած Իսրայէլի որդեոց երեւցաւ:

12. Յեկթովէլ, Գ Թագ. 14. 7, Ամասիա աշխ վէմը գըրաւեց 10,000 մարդ մեռցնելով Ազի ձորին մէջ:
13. Հովր լեւ, Թուոց. 20. 27, ուր Ահարոն մեռաւ:
14. Մերիպայի ջուր. Թուոց. 20. 13, ուր Մովսէս և Ահարոն զԱստուած չփառաւորեցին, և տուժեցին:
15. Յաբուկի անցք, Ծննդ. 32. 22, ուրկէ Յակոբ իր ունեցածովը անցաւ:
16. Փանուէլ, Ծննդ. 32. 30, ուր Յակոբ զԱստուած դէմ առ դէմ տեսաւ:
17. Մանայիմ. Ծննդ. 32. 2, ուր Յակոբ Աստուծոյ բանակը տեսաւ:
18. Գաղաադու լեռներ, Ծննդ. 31. 48—49, ուր Յակոբ և Լաբան հետեւեալ ուխտը ըրին: «Մեր իրարմէ զատուած առեւնը իմ ու քու մէջտեղը Տէրը զիտէ»:
19. Յաբիւ. Ա Թագ. 31. 11, ուր ոյժի տէր մարդիկ Սաւուղի մարմինը այրեցին, և 7 ը օր ծոմ պահեցին:
20. Բասանի երկիր. Սաղմ. 136. 20, ուր կը բնակէր Ուզ թագաւորը:
21. Գաղարացեոց երկիր... Մատթ. 8. 28—34, ուր խոզերու երամակը գահալէժ դէպի ծովը վազեցին:
22. Գեննեսարէթի ծովակ, Դուկ. 8. 22—25, զոր սաստեց Յիսուս և հանդարտեցուց:
23. Գալիլիոյ ծովեզերքը, Մարկ. 7. 31—32, ուր Յիսուս խուլ և դժուարախօս մէկը բժշկեց:
24. Մակդաղին, Դուկ. 8. 2, ուր Մարիամ Մագդաղենացի կը բնակէր:
25. Բեթսայիդա, Մարկ. 8. 22, ուրկէ Յիսուս կոյր մը դուրս հանեց, և անոր աչքերուն թքնելով բժշկեց զայն:

26. Անապատ տեղ մը, Մարկ. 6. 35—44, ուր Յիսուս 5000 հոգի կերակրեց:
27. Կափառնայում, Մարկ. 2. 1—12, ուր Յիսուս անգամալոյծ մը բժշկեց:
28. Մառնի ջուրներ, Յես. 11. 5, ուր Յեսուս չափ թագաւորներ մեռցուց:
29. Երանութեան լեռ, Մատթ. 5. 1, ուր Յիսուս ինը երանիները ըսաւ:
30. Կանա, Յովհ. 2. 1—11, ուր Յիսուս առաջին հրաշքը ըրաւ:
31. Գեաքոփեր, Դ թագ. 14. 25, ուր Յովսէան կը բնակէր:
32. Նազարէթ, Դուկ. 4. 16, ուր Յիսուս մեծցած էր:
33. Կարմեղոս լեռ, Գ թագ. 18. 39, ուր Աստուած Եղիայի աղօթքին պատասխան տուաւ, և ուր Աբրահամ, Խաչեր, Վահրամ և Սամուէլ եղբայրները դէպի հիւսիս, հարաւ, արեւելք և արեւմուտք բաժնուելով կէս ժամ կենդանի Աստուծոյն աղօթք ըրին:
34. Պէլլութ, ուր մենք Աստուծոյ ողորմութեամբը կ'ապրինք, և կը դործենք:

ՎԵՑԵՐՈՐԴ ԶԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

ՊԷՅՐՈՒՏԷՆ — ԵԳԻՊՏՈՍ

1. Մեծ ծով, կամ միջերկրական ծով, Եզեկ. 48. 28, որ ապագային Իսրայելի 12 ցեղերուն արեւմտեան սահմանը պիտի ըլլայ:
2. Աղէքսանդրիա, Գործք. 18. 24, ուր Ապողոս ծնած է:
3. Եգիպտոսի գետ, (Նեղոս գետ), Ելից. 1. 22, ուր Մովսէս ձգուեցաւ:
4. Գահիրէ, Եգիպտոսի մայրաքաղաքն է:
5. Յովսէփի շտեմարաններ, Ծննդ. 41. 56, ուր Յովսէփ ծովու աւազին չափ ցորեն գիզեց:
6. Տայանիա, Եսա. 19. 11, որուն իշխանները յիմարնէր էին:
7. Յովսէփի փախած վայրը, Մատթ. 2. 13, ուր Յիսուս անվտանգ մնաց մինչև Հերովդէսի մահը:
8. Եգիպտոսի կոթողներ, կամ բուրքեր, Եսա. 19. 19—21, որոնք իբր նշան և վկայութիւն կը մնան:
9. Օն կամ Արէգ, Ծննդ. 41. 45, ուրկէ Յովսէփ Աստուծոյ իրեն կին առաւ:
10. Ռամսէս, Ելից 12. 37—39, ուրկէ Իսրայելացիք առաջին անգամ չուեցին:
11. Սոկոթոփ, Ելից 12. 37—39, ուր Իսրայելացիք իրենց առաջին կայանը ըրին:
12. Ոթոմի անապատ, Ելից 13. 20—22, ուր Տէրը ցորեկը աճպի սիւնով, և գիշերը կրակի սիւնով Իսրայելացւոց առջևէն կ'երթար:

13. Փրախրթ, Ելից. 14. 2, ուր եզրպատցիք գարձեալ Խորայէլացիները պաշարեցին կարմիր ծովուն քովը:
14. Կարմիր ծով, Ելից 14. 23-30, ուր՝ Աստուած Իսրայէլացիները ցամաքով անցուց, և եզրպատցիները կործնեցուց, ուր ես այժմ ծովուն վրայ Աստուծոյ շատ փառք տուի:
15. Փորթ Սալիտ, Սուէզի ջրանցքին հիւսիսային կայանն է, 100,000 բնակչութեամբ, ուր Աբրահամ և Վահան եղբայրներուն հետ ողջագործեցանք:
16. Կամուրջ (Քանթարա), ուրկէ հայր Աբրահամ, Յովսէփ և ուրիշներ անցան:
17. Եզրպատիս հեղեղատ, Յես. 15. 1-4, եզրվմայեցուց հարաւային սահմանը մինչև հոս կը հասնէր:

ԳԻՊԻ ՊԱՂԵՍՏԻՆ

18. Բոսորի հեղեղատ, Ա. Թադ. 30. 9-25, ուր Դաւիթ մեծ յաղթանակ մը տարաւ Ամաղէկացուց վրայ:
19. Գազա, Դատ. 16. 1, ուր Սամփոնն՝ քաղաքին դրանը փեղկերը լեռանը գլուխը հանեց:
20. Գերարայի երկիր, Ծննդ. 20. 1-2, ուր Աբրահամ պանդխտանալու գնաց:
21. Ասկաղոն, Դատ. 14. 19, ուր Տէրոջը Հողին Սամփոնի վրայ գալով 30 մարդ մեռցուց:
22. Երուսաղէմ, Յովհ. 7. 10-52, ուր Յիսուս կ'աղաղակէր ու կ'ըսէր. «Եթէ մէկը ծարաւ է, թող ինծի գայ»:
23. Գեթսեմանի պարտէզ, Յովհ. 18. 1-2, ուր Յիսուս իր աշակերտներուն հետ շատ անգամ ժողովուած էր:
24. Զիթենեաց լեռ, Զաք. 14. 7, ուր մեր հօգը և փառաւորեալ Տէրոջ ոտքերը պիտի կայնին իր երկրորդ գալստեան ատեն:

25. Գալիլիոյ ծով, Մատթ. 14. 22-33, որուն վրայէն Տէր Յիսուս քալելով անցաւ:
26. Անապատ տեղ մը, Մարկ. 1. 35 ուր Յիսուս առաւօտուն շատ կանուխ գեռ չլուսցած ելաւ, ու գնաց աղօթք ընելու:
27. Նազարէթի լեռը, Դուկ. 4. 29-30, ուր մեր Տէրը տարին անկէ վար ձգելու, բայց Ան անոնց մէջէն անցաւ գնաց:
28. Կարմեղոս, Յես. 12. 22, որուն թագաւորը Յեսու զարկաւ:
29. Պէլլուսթ, ուր Անով կ'ապրինք, կը շարժինք ու կանք: Գործք. 17. 28:

Երանի՛ անոնց որ տեսած չեն ու կը հաւատան: Յովհ. 20. 29:

Մանաւանդ թէ երանի՛ անոնց որ Աստուծոյ խօսքը կը լսեն ու կը պահեն: Դուկ. 11. 28:

Հետեւեալ աղօթքը Զիթենեաց լեռան Ռուսական բարձր աշտարակին վրայ Աբրահամ եղբայր Սէֆէրեանի կողմէ եղած է:

«Ես Բապպ, չիւքը հտէրիզ պէրէքէթլէրին իշիւն: Շիւքը հտէրիզ էվիէլէրի շէյլէր իշիւն, չիւքը հտէրիզ միւսթագպէլ իշիւն:

Ես Բապպ, սալթ ինայէթին տիր քի կէօնէնիլիզ, պիլլոմ ինթիյաճըմըզ Սէն սին, պիլլէ խէլաոընը վէրտին վէ նէ՛ պէւլիւք սէլահիյէթլէր պիլլէ վէրտին, չիւքը օլտուն:


Ես Բապպ Յիսուս, չու վէ պու շէյլէլի վէրմիշտին,

ութանըրըզ: Պիղիմ իշխւն նէ թէրթիպլէրին վար իսէ,
հէման Սէնին իրատէթին պիղտէ իճրա օլսուն:

Եա Բապպ, պիր շէյ էսիրկէմէտին, պիւթիւնէն վէր-
տին, պիղ կէրէքսիղ իղ, Սէնին օլանը Սանա վէրի-
րիղ, քի Սէն պիղտէ Սէնին իրատէթինի իճրայա գօ-
յասըն, թէմամէն իղզէթլէնէսին:

Եա Բապպ, պու կէօրտիւլիւմիւղ մէնզարէլէր ան-
ճազ Սէնին իշինտէ քէրէսթէլէր օլսուն:

Եա Բապպ, հէման պու գուլէտէ, պուրայա կէլէ-
ճէքսին, մուգատտէսլէրլէ պուրայա էնէճէքսին: Ինա-
նըրըզ քի պիղ տէ պուրատա օլաճաղըզ: Պիղտէն հէր
պիրիմիղ (Աբրահամ, Խաչեր, Վահրամ, Սամուէլ)
կոչուումըզ նէ իսէ թալին էյլէ, պիղէ գլաղուղ օլ,
շիմտիյէ գատար թալիմ էթտին, Սանա թազտիմ օ-
լունըրըզ: Սէնին իղզէթլինէ իօթիմալ էյլէ, պիւթիւն
իշլէրիմիղ Սէնին իղզէթլին իշխւն օլսուն, Սանա շիւքը
օլսուն: Ամին»:



Այս տետրակին գինն է 1 ֆրանկ

Հասցե,

MARANATHA

B. P. No. 303

Alep, (Syrie)

«Ազգային գրադարան»



NL0161846

